

Ե. Մուշեղյան

ԲՋՆԻ 1358 Թ. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բջնիի ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատին դրսից զետեղված է 1358 թ. դրված մի արձանագրություն: Այն մեր ուշագրությունը գրավեց նախ իր բովանդակությամբ, ապա և իր մեջ պարունակող տեղեկություններով:

Բջնին 13-րդ դարի սկզբին սելջուկյան տիրապետությունից ազատագրվելուց հետո ընդհուպ մինչև 14-րդ դարի կեսերը մնում էր Զաքարյանների ձեռքին (Բջնիի բերդը Բվանե աթապակի սերունդների ձեռքին էր մնում ընդհուպ մինչև 1358 թ.):

Արձանագրության հեղինակը աթապակ Զազայի որդի աթապակ Շահնշահն է:

Գ. Հովսեփյանի Զեռագրաց հիշատակարանում (Ա, 895) գրված է, որ երբ 1357 թ. Անիի վրա հարձակվեցին տաճիկները, հիշվում է Զաքարիա Գ-ի որդի մեծ աթապակ և ամիր-սպասալար Շահնշահ Գ-ն, որը 1358 թ. դեռևս կենդանի էր: Այս Շահնշահ Գ-ն աթապակ՝ Զազայի հայրն էր:

Մի քանի խոսք վերահիշյալ Զաքարիա Գ-ի մասին:

Մեր կարծիքով Գ. Հովսեփյանի հիշատակած Զաքարիա Գ-ն ոչ այլ ոք էր, եթե ոչ Իվանե աթապակի թոռ ճոշաթ իշխանուհու և մոնղոլների Սահիպ դիվան Շամսեդդին Զուվեյնիի որդի Զաքարեն, որը ի դեպ արձանագրություններում հիշվում է երբեմն նաև Ամիր Զաքարե անունով: Նա հիշվում է Գառնիում 1291 թ. գրված մի արձանագրության, ինչպես և Բջնիի 1325 թ. արձանագրության մեջ:

ճոշաթ իշխանուհին Սահիպ դիվանից ունեցել է նաև մի այլ որդի Աթաբեկ անունով, բայց սա դեռևս 1289 թ. փոքր հասակում մահանում է¹: Սահիպ դիվանի որդի Զաքարեն հիշվում է նրա թողած կտակում, որտեղ ասում է, որ իր կալվածքներից Շահնշահների Թուման Անին նա կտակում է Զաքարեին:

Դա 1284 թ. էր: Ավելի ուշ՝ 1289 թ. Արղուն խանը հրամայում է սպանել Սահիպ դիվանի բոլոր որդիներին: Այդ ժամանակ Սահիպ դիվանի Աթաբեկ որդին արդեն մեռած էր, իսկ Զաքարիան գտնվում էր Աբխազիայում և նրան հաջողվում է փրկել իր կյանքը: Այնուհետև, ինչպես ասացինք, Զաքարեն հիշվում է Գառնիի 1291 թ. և Բջնիի 1325 թ. արձանագրություններում: Զաքարեն հիշվում է նաև Զազավանքի արևմտյան պատին 1325 թ. գրված մի այլ արձանագրության մեջ:

«Թվ. 927 [1325] ի պարոնութե [ան] Զաքարիա[յի] թոռն Աւագին...», — ասված է այնտեղ:

Զաքարյանների տոհմից 13-րդ դարի վերջին և 14-րդ դարում քիչ թե շատ աչքի ընկնողը այս Զաքարեն էր: Այսպիսով, անհավանական չի, որ Գ. Հովսեփյանի հիշատակած Զաքարիա Գ-ն հենց այս անձնավորությունը լինի: Եթե մեր այս դրույթը ճիշտ է, ապա շատ բնական է, որ Բջնիի բերդը պատկանելիս լինեի նրա որդի Շահնշահին ու նրա հաջորդներին՝ աթապակ Զազային և սրա որդի Շահնշահին: Ժիշտ է, կարող է պատահել, որ 1357 թ. Անիի վրա տաճիկների արշավանքի ժամանակ² Զաքարիա Գ-ի որդի Շահնշահը կենդանի լինեի, իսկ այդ էության ժամանակ Բջնիի բերդը կարող էր գտնվել նրա թոռ՝ Զազայի որդի աթապակ Շահնշահի ձեռքին: Սակայն անցնենք բուն արձանագրությանը: Արձանագրությունը հրատարակել են Շահխաթունյանցը⁴ (Բ, 183—184), Սմբատյանցը⁵ (էջ 320—321), Ալիշանը (Այրարատ 273):

¹ Рашид-эд-Дин, Сборник летописей, т. III, стр. 115.

² Рашид-эд-Дин, Сборник летописей, т. III, стр. 115—116.

³ Ալիշան, Այրարատ, 112 (տաճիկների ասելով այստեղ պետք է հասկանանք Ոսկե հորդայի թաթարներին:— Ե. Մ.):

⁴ Շահխաթունյանց, Ստորագրութիւն էջմիածնի... 1842:

⁵ Սմբատյանց, Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի... 1896:

յուց հետո նաև՝ հայ եկեղեցուն հալածելը, նրա ունեցվածքի և կալվածքների բռնագրավումը և այլն։ Միաժամանակ պայքար էր գնում հենց իրենց՝ թաթար իշխողների միջև միմյանց և մանավանդ Մելիք Աշրափի տիրապետության դեմ։ Մելիք Աշրափի դեմ դժգոհությունն այն աստիճան է սաստկանում, որ էմիրների մի մասը բանակցում է Ոսկե Հորդայի խան Ջանիբեկի (1340—1357) հետ և վերջինիս անմիջական օգնությամբ 1357 թ. Թավրիզում սպանում են Մելիք Աշրափին։

Մեր արձանագրության մեջ դրված է, որ Մելիք Աշրափը բռնությամբ խլել էր Բջնիի բերդը Շահնշահ աթապակից և ճորտերին եսիր դարձրել, իսկ նրա տիրապետության մասին մի հիշատակարանում գրված է.

«Արդ գրեցաւ աղաթական դիրքս այս ի յայսմ ամի, յորում էր թիւն Հայոց Պէ (1358), յորժամ զչար իշխանն և զաւերումն աշխարհաց, զարբանեակն սատանայի, որոյ անունն Աշրաւ կոչիր, ի խնամոցն աստուծոյ եկն թագաւորն հիւսսային, որոյ անունն Ջանիբեկ կոչիր և երարձ զկարապետ նեռինն. ի կենաց և եղև դադարումն շարեաց նորա՝ Այստեղ անհրաժեշտ ենք համարում մի փոքր ուղղում մտցնել. Ոսկե Հորդայի խան Ջանիբեկի արշավանքը տեղի է ունեցել ոչ թե 1358 թ., այլ 1357 թ., որովհետև նա իշխել է մինչև 1357 թ.²»

Մելիք Աշրափի տիրապետության անկումից հետո նրա զորավարներից Հաճիրեկը փորձում է հաստատել իր տիրապետությունը Հայաստանում. այդ նպատակով նա ապստամբություն է բարձրացնում. այդ մասին արձանագրության մեջ գրված է՝ իաղեցաւ Ռուս-պարսկերեն բառարանում մեզ հաջողվեց գտնել «Իաղի» և բառը, որ նշանակում է ապստամբ, խռովարար³,

Ուրեմն Հաճիրեկը Մելիք Աշրափի սպանությունից հետո փորձել է գրավել նրա տիրապետության տակ գտնվող Բջնիի բերդը։

Սակայն ինչպես արձանագրությունն է հայտնում, Բջնիի տերը՝ աթապակ Շահնշահը իր շուրջն է հավաքում «սալահր ի մուլահրէն» կոչված զորքը, հարձակվում է ապստամբ Հաճիրեկի վրա և հետ է գրավում քաղաքը, որից հետո նորից վերանորոգում է բերդը, քաղաքը, եկեղեցիներն և այլն։

Մի քանի խոսք «սալահր ի մուլահրէն» տերմինների մասին. դրանք պարսկերեն բառեր են։ Պարսկերենում «սալահր» կամ «սալար» բառն ունի երկու իմաստ՝ 1. զորագլուխ (որից և սալահսալար բառը) և 2. ժողովրդի առաջնորդ⁴։

Մուլահրը պարսկերենում ունի չորս իմաստ. 1. տեր, հովանավոր, 2. բարեկամ, 3. ազատագրված գյուղացի, ստրուկ, ծառա⁵։

Մուլահր բառի չորս իմաստից մենք տվյալ դեպքում հարմար ենք գտնում նրա երրորդ իմաստը՝ ազատագրված գյուղացի։ Որ մարդկանց որոշ կատեգորիա «մուլահր» անվան տակ մեզ մոտ միջնադարում գոյություն է ունեցել, այդ երևում է նաև Հավուց թառում 1209 թ. գրված մի արձանագրությունից։ Ավելորդ չենք համարում մեջ բերել այդ արձանագրության համապատասխան մասը, օգտվելով մեր սեփական հավաքածուից⁶։

«[Շնոր]հիւն Ա[ստուծոյ] եւ ողորմութիւն]մար մեր պար[ոն]ացն [դիտոփա] Թամարին եւ աթապակ Շահնշահի մեր մեղուցել ծառայքս մուլահրս Ամիր Սարգիս նորագաւթեցի եւ ամու-

¹ Լ. Խուշիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 433.

² Стэнли Лек Пуль, Мусульманские династии, С. Петербург, 1899, стр. 191.

³ Персидско-русский словарь под ред. проф. Миллера, Москва, 1950, стр. 1040.

Անհրաժեշտ ենք համարում բերել նաև մի այլ վկայություն. Վ. Հակոբյանի «Մանր ժամանակագրություններում» (Երևան, 1951) հանդիպում ենք մի այսպիսի վկայության. «ՊԶ (1357) զԱշրափն եսպան ճանիբեկն և Յախին նստաւ» (էջ 118)։ Ուրիշ ոչ մի տեղ մեզ չհաջողվեց որևէ տեղեկություն գտնել Մելիք Աշրափին հաջորդող տիրակալի մասին։ Մեղ թվում է, որ այստեղ հիշվող Յախին ոչ այլ ոք է քան նույն Հաճիրեկը, որը «Իաղել» խռովություն է բարձրացրել Մելիք Աշրափի ժառանգությունը ձեռք զցելու համար (Յ. Մ.)

⁴ Տե՛ս Գեորգ Դպիրի պարսկերեն բառարանը, Կ. Պոլիս, 1826, էջ 465.

⁵ Персидско-русский словарь под ред. проф. Миллера, стр. 341.

⁶ Այդ արձանագրությունը հրատարակել է նաև Գ. Հովսեփյանը. տե՛ս նրա «Հավուց թառի Ամենափրկիչը և նոյնանուն յուշարձաններ հայ արուեստի մեջ», Երուսաղեմ, 1937, էջ 26.

սին իմ էրմանի եւ եզրայր իմ Ամիր միաբանեցաք սրբոցս եւ տվաք յէրեւան զմեր գանձագին հայրենիս այգին...»։ Ուրեմն նորագավթեցի մուլահը Ամիր Սարգիսը իր հայրենի գանձագին այգին նվիրել է վանքին։ Մեզ թվում է, որ այդ դեպքում ևս պետք է մուլահը հասկանալ որպէս ազատագրված գյուղացի։

Սակայն վերադառնանք նախորդ արձանագրությանը։ Ուշադրությամբ արձանագրությունը կարգալիս պարզվում է հետևյալը. երբ Հաճիրեկը հարձակվում է Բջնիի վրա և այն գրավելուց հետո կործանում է ու բնակչությանը սրի մատնում, բերդի տերը՝ աթապակ Շահնշահը առաջնորդում է (որպէս զորագլուխ) ազատագրված գյուղացիներին (?) և հեծելազորին, նորից հետ է գրավում բերդը, վերակառուցում է քաղաքը, եկեղեցիներ, վերականգնում է վերջինիս կալվածքները և նորից ուժի մեջ է դնում թարխանական իրավունքը։ Մի քանի խոսք այս մասին. թարխանական իրավունքը Հայաստանում կիրառվում էր 13 և հատկապէս 14-րդ դարերում՝ մոնղոլների տիրապետության ժամանակ։ Ըստ այդ իրավունքի զինվորներն իրենց ծառայության դիմաց ստանում էին գյուղեր ու կալվածքներ և ազատվում էին պետական հարկերից։ Թարխանական իրավունք ստանում էին նաև հայ ազնվականներից շատերը, որոնք ծառայում էին մոնղոլական բանակում, կորցրել էին իրենց գավառատեր լինելու իրավունքը և դարձել սոսկ տանուտերեր։ Հավանաբար նման իրավունք ունեն նաև Զազայի որդի աթապակ Շահնշահը, որը Հաճիրեկի բարձրացրած ապստամբությանը չի մասնակցում և պահպանում է Մելիք Աշրափից՝ ստացած թարխանական իրավունքը։